Եռամսյակային հաշվետվություն

2021 / ապրիլ-հունիս

ԿՐԹԱԿԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

WWW.ERIT.AM



Երիտասարդական քաղաքականություն

Ընթացիկ եռամսյակի ընթացքում Erit.am երիտասարդական պորտալի հիմնական էջում ստեղծվել է «Երիտասարդական քաղաքականություն» ենթաէջը՝ 3 բաժիններով՝ «Պետական քաղաքականություն», «Աշխատանք և կամավորություն», «Միջազգային համագործակցություն»: Բաժնում տեղադրվում են Երիտասարդական պետական քաղաքականության 2021-2025 թթ. ռազմավարության հետ առնչվող հրապարակումներ՝ պաշտոնական լրահոսից՝ մինչև ռազմավարությամբ ամրագրված նպատակների վերաբերյալ հեղինակային հարցազրույցներ:

Ենթաբաժնում հրապարակվել է շուրջ 70 հրապարակում: Դրանցից 50–ը սեփական արտադրության բովանդակություն են:

www.erit.am

Հիմնական ցուցանիշներ

ԿԱՅՔԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	22 000
ՖԵՅՍԲՈՒՔՅԱՆ ԷՋԻ ՀԱՎԱՆՈՒՄՆԵՐԸ	+2 805
ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԹԻՎԸ	376
ՍԵՓԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	172

Erit.am երիտասարդական պորտալի կայքում հաշվետու ժամանակահատվածում հրապարակվել է 376 նյութ, այդ թվում՝ 117 նորություն, 2 վերլուծություն, 100 հարցազրույց, 60 հայտարարություն, աշխատանքի 67 հայտարարություն, 20 հրապարակում եղել է «Պատկերասրահ» բաժնում:

Ըստ Google Analytics համակարգի տվյալների՝ Erit.am երիտասարդական պորտալի այցելուների թիվը կազմել է ավելի քան 22 000: Այդ թվում՝ նոր օգտագործողների թիվը կազմում է 21 000:

Հաշվետու ժամանակահատվածում Erit.am երիտասարդական պորտալի ֆեյսբուքյան էջի հավանումների թիվը եռապատկվել լ է՝ հասնելով 3750–ի:

Առանձին ենթաբաժնով գործարկվել է «Գրադարան» բաժինը՝ https://erit.am/erit_library